

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱԼԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բ. Գ. Պ., պրոֆ. ԹԵՐԵԶԱ ՆԱՎԵՐԴՅԱՆ

Հայ լեզվաբանության պատմության մեջ ամենաբեղմնավոր հեղինակներից է Յր. Աճառյանը: Տաղանդավոր գիտնականը, աշակերտելով հնդեվրոպական դպրոցի այնպիսի տիտաններին, ինչպիսիք են գերմանացի գիտնական Հայնրիխ Յուրբշմանը և ֆրանսիացի գիտնական Անտուան Մեյեն, մի նոր աստիճանի բարձրացրեց մինչև իր ժամանակաշրջանն ընկած հնդեվրոպական լեզվաընտանիքի վերաբերյալ, մասնավորապես հայ լեզվաբանության նվաճումները: Հայոց լեզվի պատմության գիտական աղբյուրները թերթելիս հաճելիորեն զարմանում ենք, որ չկա մի բնագավառ, ուր իր ժանրակշիռ խոսքն ասած չլինի ակադեմիկոս Յր. Աճառյանը: Այսպես՝ հայ ժողովրդի կազմավորման, հայոց լեզվի ծագման հարցեր, նախամետրոպոլիտան գրի զոյության կամ չզոյության պարզաբանումներ, մետրոպոլիտան գրերի արժևորումներ, V դարի մատենագրության լեզվաոճական դասակարգումներ, գրաբարի, միջին հայերենի, աշխարհաբարի քերականական համակարգերի քննություններ, հայոց բարբառների ձևաբանական դասակարգում, հայոց լեզվի բառապաշարի հասարակ, հատուկ անունների, ինչպես նաև բարբառային բառերի ստուգաբանումներ, սրանց հիման վրա հայոց լեզվի պատմության երկիստորանոց աշխատություն և հայոց լեզվի ծավալուն քերականություն՝ աշխարհի 562 լեզուների համեմատությամբ: Ահա այն հիմնական կարևոր հարցերը, որոնց քննությամբ զբաղվել ու իր ժանրակշիռ խոսքն է ասել Յր. Աճառյանը: Նրա հատորները սեղանի գրքեր են յուրաքանչյուր լեզվաբանի համար: Չարմանալիորեն նրա գրքերը ոչ մի հղում չունեն, առհասարակ օգտագործված գրականության ցանկեր չկան: Աճառյանն ինչպես հարմար է գտել, իր տեսությունները զարգացրել է՝ գերազանցապես առանց այլոց կարծիքները հաշվի առնելու:

Յր. Աճառյանը դերբային տալիս է հետևյալ սահմանումը. «Այն բայերը, որոնք ձևով անուն և իմաստով բայ են, կոչվում են դերբայ կամ աներևույթ»¹: Սահմանումը տարակուսանքի տեղիք է տալիս. ի՞նչ է ցանկացել ասել անվանի հայագետը՝ «ձևով անուն են». եթե նկատի ունի կազմությունը, ապա դրանք տարբեր են, և հետո նույն ձևով գրաբարի դերբայներից երեքը՝ անորոշը և անցյալը (թեք ձևերով ենթակայների հետ), ապառնին (**ոց** վերջավորությամբ) համդես են գալիս դիմավոր բայի գործառնությունով, առաջինը (անորոշը) միայն վերահիմաստավորված, անցյալ դերբայը՝ երբեմն, վերջին երկուսը՝ խոնարհման համակարգում **եմ** օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի հետ՝ ձևավորելով գրաբարի խո-

¹ Յր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 5, Երևան, 1965 թ., էջ 5:

մարհման համակարգի բաղադրյալ ժամանակային ձևերը. դեռ ավելին, **ng** վերջավորությամբ ապառնին կախյալ դերբայ է, գրաբարի միակ կախյալ դերբայը:

Չր. Աճառյանի կարծիքով՝ այս երկու եզրերը «էպպես նույնն են», սակայն վերահաստատելով այն ճշմարտությունը, որ բոլոր մյուս լեզուների քերականությունները գրվել են հունարենի նմանությամբ, դերբայի և աներևույթի միջև տարբերություն է տեսել: «Երբ բայը կատարում է գոյականի դեր, կոչվում է աներևույթ» (infinitif) (իմա՝ փոխանվանաբար է գործածվում – Թ. Շ.), իսկ երբ կատարում է ածականի դեր, կոչվում է դերբայ (particpe)....:

Չայերենի մեջ մենք **դերբայ** բառին տալիս ենք ընդհանուր գործածություն, և **անորոշ դերբայ** ասելով հասկանում ենք **աներևույթը**¹:

Չր. Աճառյանը խոսքիմասային փոխանցումները փոխանակություն է կոչում, սակայն հաճախ փոխանունությունն ու փոխաբերությունը շփոթում է միմյանց հետ: Այսպես՝ «Օրինակ՝ էշ նախ գոյական է և անշուշտ գոյական է , բայց երբ ասենք **էշ մարդ, էշը** դառնում է ածական: Նույնպես **կարմիր** ածական է և միայն ածական, իսկ երբ ասենք՝ **կարմիրները** եկան, դառնում է գոյական»²: Առաջին օրինակում մենք ունենք փոխաբերություն, երկրորդ օրինակում՝ փոխանունություն: Շարունակելով իր միտքը՝ Աճառյանը գրում է, որ դերբայը և աներևույթը երբեմն կարող են գոյական լինել, երբեմն՝ ածական. անորոշ դերբայի (աներևույթ) ուղիղ ձևը գոյական է, բայց երբ հոլովվում է, դառնում է ածական: Այստեղ ուշադրության արժանի է Աճառյանի եզրահանգումը՝ «... իբր թե ապառնի դերբայ լիներ»³: Խորհելու առիթ է տալիս հետևյալ հանգամանքը: Որ անորոշ դերբայի սեռական (գրելու), տրական (գրելու) ձևերը ձևաբանական համանունություն են կազմում կատարելի դերբայի հետ, հայտնի է և վաղուց ճանաչված. սրանց տարբերակման միակ միջոցը ի հայտ է գալիս շարահյուսական մակարդակում. եթե անկախ գործածություն ունի, անորոշի թեք ձև է, եթե օժանդակ բայի հետ է հանդես գալիս, կախյալ դերբայ է, և դա ապակատար կամ կատարելի դերբայի միակ գործառույթն է: Սակայն երբ ուշադրություն ենք դարձնում կրկնաբաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը, տեսնում ենք, որ այդ կառույցներում հանդես եկող երկու դերբայները անկախ են՝ համակատարը, հարակատարը (գրելիս, գրած), իսկ միայն կատարելին՝ կախյալ դերբայ: Չարք է առաջանում՝ օրենքը նորից տալիս է բացառություն, թե՞ ճիշտ չի արժևորում կատարելի դերբայի շարահյուսական գործառույթը, մանավանդ որ այնպիսի տաղանդավոր գիտնական, ինչպիսին Վ. Առաքելյանն է, գրում է. «Որոշիչ դառնում են հարակատար, ենթակայական, ապառնի դերբայների ներգործական, կրավորական և չե-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

գոք ձևերը»¹... **Ու**-ով վերջավորվող ապառնի դերբայով ասվում է՝ **ուտելու** հաց, **ցանելու** սերմ, **պահելու** խնձոր, **գրելու** թուղթ և այլն:

Որ **ապառնի** (իմա՝ կատարելի) դերբայը կիսով չափ անկախ է համարում, Վ. Առաքելյանը տալիս է մի լրացուցիչ բացատրություն-հիմնավորում: Եթե **ու**-ով տարբերակը փոխարինվում է **ի**, **իք** տարբերակներով (**պահելու** խնձոր – **պահվելիք**), ուրեմն ապառնի դերբայ է, իսկ եթե ասում ենք **պահելու** կերպը, այստեղ չի հասկացվում այն կերպը, որը պահվելու է (չի դառնա **պահելի** կամ **պահելիք** ձև): Ուստի այս վերջին օրինակում **պահելու**-ն համարում է հատկացուցիչ՝ արտահայտված անորոշի սեռական հոլովով²:

Տվյալ պարագայում մեզ հետաքրքրողն այն հարցն է, թե ապակատարը կախյա՞լ դերբայ է, թե՞ կիսանկախ: **Ու** վերջավորությամբ դերբայներով արտահայտված որոշիչները, մպատակի պարագաները արտահայտված են անորոշ դերբայի սեռական, տրական հոլովներով (սովորելու դաս, սովորելու եկած), թե՞ կատարելի դերբայով: Կարծում ենք՝ վերջինիս օգտին են խոսում նաև կրկնաբաղադրյալ ժամանակածներում հանդես եկող նրա գործածությունները:

Ըստ Աճառյանի՝ «իբր թե ապառնի դերբայ լիներ», ըստ Վ. Առաքելյանի՝ ապառնի դերբայ է, 20-րդ դարի բազմաթիվ գիտնականներ այն համարում են անորոշ դերբայի թեք հոլովածներ: Կարծում ենք՝ Վ. Առաքելյանի բացատրությունը ավելի համոզիչ է, եթե սրան էլ ավելացնենք մեր բացահայտած կրկնաբաղադրյալ ժամանակածնի կազմությունը, որտեղ անկախ դերբայների հետ ապակատար կամ կատարելի դերբայը կատարում է նույն գործառույթը, ինչ հարակատարն ու համակատարը:

Մինչև դերբայների մասին բուն նյութին անցնելը մախ եզր (եզրույթ) կամ **տերմինների** մասին:

Հայտնի է, որ մինչև 19-րդ դարի կեսը գրաբարի երեք դերբայները (ներկա կամ ենթակայական, անցյալ, ապառնի կոչվել են ընդունելություն³ գրաբարի դերբայների քննությունը մենք ներկայացրել ենք մեր առաջին ատենախոսության մեջ⁴): Անորոշ դերբայը կոչվել է **աներևույթ** և չի ընդգրկվել մյուս դերբայի շարքում: Ինչու՞..., որովհետև գրաբարի մյուս դերբայները, բացի բայի երկու կարևոր հատկանիշներից (սեռ և բայիմաստ), ունեն նաև ժամանակի քերական կարգ, որով էլ հենց տերմինավորվել են՝ ներկա, անցյալ, ապառնի: Աճառյանը գրում է,

¹ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ.1, Երևան, 1958թ., էջ 225:

² Նույն տեղում:

³ Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի տես զարգացելոց, Վեներտիկ, Ս. Ղազար կղզու տպարան, 1852թ., 744 էջ:

⁴ Տե՛ս գրքային տարբերակը, Գրաբարի դերբայները. ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, «Վան Արյան» հրատ., 2001թ.:

որ **անորոշը** աներևույթ է կոչվում, որովհետև նրա ժամանակի կարգը կոնկրետացնում է որոշակի համատեքստում: «Անորոշ դերբայը ժամանակ չունի. սրա համար էլ կոչվում է անորոշ. նրա ժամանակը որոշվում է գործածության տեղի համաձայն՝ ինչպես գրաբարում, նույնպես և աշխարհաբարում. օրինակ՝

հույս ունի հաղթել (ներկա)

հույս ուներ հաղթել (անկատար)

հույս կունենա՞ս հաղթել (ապառնի)»¹:

Գիտենք, որ արդի հայերենի դերբայները գրաբարի դերբայների անմիջական ժառանգորդներն են. անորոշը և ենթակայականը մասնակի փոփոխություններով են մեզ հասել, անցյալ դերբայը տրոհվել է երկու նոր դերբայների միջև՝ վաղակատարի և հարակատարի, իսկ անորոշի հենքի վրա առաջացել են նոր դերբայներ՝ անկատար, կատրելի, համակատար և ժխտական:² Ինչը պատճառ դարձավ տերմինափոխության համար: Մի բառակապակցությամբ եթե պատասխանելու լինենք՝ քերականական իմաստափոխությունը, այսինքն դերբայը արդի հայերենում ոչ թե ժամանակի կարգ է արտահայտում, այլ գործողության կերպի՝ անկատար, կատարելի (կամ ապակատար), վաղակատար: Սակայն Աճառյանը լեզվի պատմության բոլոր շրջանների համար (այդ թվում նաև բարբառների) գործածում է գրաբարյան տերմինները՝ ներկա, անցյալ, ապառնի:

Անորոշի (աներևույթի) համար Աճառյանը ճանաչում է 4 լծորդություն.

ա – **ե** խոնարհման պարզ և ածանցավոր բայեր,

բ – **ի** խոնարհման պարզ և ածանցավոր բայեր,

գ – **ա** խոնարհման պարզ և ածանցավոր բայեր,

դ – **ու** խոնարհման բայեր:

Աճառյանը իրավացիորեն գտնում է, որ ք լծորդության բայերի անորոշ դերբայի բնի ձայնավորը **ի** չէ, այլ **ա** լծորդության մնան՝ **ե**: **խօսել**, **ուսանել** և ոչ թե **խօսիլ**, **ուսանել**:

«Այս երևույթը շատ հին է, և մեսրոպյան շրջանի գրականությունը չի ճանաչում **իլ**, **անիլ** վերջավորությամբ աներևույթ (իմա՝ անորոշ – Թ. Շ.)»³:

Այս երևույթը Աճառյանը բացատրում է այդ բառերի սեռականով՝ խոսելոյ, ուսանելոյ: Օրենքով դրանք պետք է լինեին խօսլոյ, ուսանլոյ, ինչպես **ու** խոնարհման (**գ** լծորդության՝ ըստ Աճառյանի) թողլոյ, զգեմլոյ **ու** ձայնավորի անկումով, բայց այդպիսի ձևեր գիտնականը չի հայտնաբերել անգամ հունաբան գրականու-

¹ Դր. Աճառյան, նույն տեղում, էջ 20:

² Տես Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953 թ.:

³ Դր. Աճառյան, նույն տեղում, էջ 19:

թյան մեջ:¹

Գրաբարի անորոշի կազմության մեջ նկատում է երկու անկանոնություն, որը կոչում է «անպատեհություն», առաջինը այն է, որ **ե խոնարհման** (ա լծորդություն) բայերի կրավորականը խոնարհման մեջ է ստանում կրավորականի ձևաբանական դրսևորում՝ **եմ, անեմ**-ը դառնում են **իմ, անիմ**, սակայն անորոշի մեջ մնում է խոնարհիչը անփոփոխ: Այսինքն՝ «անպատեհությունն այն է, որ անմիօրինակություն է առաջնում անորոշ դերբայի և դիմավոր բայերի խոնարհիչների միջև՝ խօսիմ, խօսիս, խօսի, բայց խօսել; խօսելոյ:

Երկրորդ անկանոնությունը (անպատեհությունը) այն է, որ **ի խոնարհման** (բ լծորդություն) ներգործականն ու կրավորականը շփոթվում են միմյանց հետ: Չր. Աճառյանը գրում է. «Դասական շրջանը լռեյայն տարավ այս երկու անպատեհությունը: Միայն երկրորդ անպատեհության դեպքում, անխուսափելի շփոթության առաջքն առնելու համար, տեղ-տեղ ստիպված էին խուսափողական դարձվածքների դիմել, ինչպես՝ **պաշտել, պատժել, մկրտել, չարչարել, կոխել** ներգործականների դեմ իբրև կրավորական գործ էին ածում **պաշտօն ռնուլ, ի պատիժս մտանել** կամ **կրել պատիժ, կնիք առնուլ, չարչարանս ընդունել, կոխան լինել**»:

Ուշ ժամանակ հնարվեց, և հունաբան դպրոցը նվիրագործեց **բ լծորդության** աներևույթի **իլ, անիլ** վերջավորությունը, որով միանգամայն ջնջվեցին և վերացան կրկնակ անպատեհությունները:²

Արդեն ասվել է, որ անորոշ դերբայը ժամանակ չունի:

Չր. Աճառյանը շարունակաբար մերթ **անորոշ** է գործածում, մերթ **աներևույթ**: Աներևույթի շարահյուսական գործառույթի մասին խոսելիս գրում է, որ այն գոյականաբար գործածվելիս ստանում է հատկացուցիչ լրացում, և բերում է հետևյալ օրինակը. «Ի կատարել աւուրց **վերանալոյ նորա**» (Նրա վերանալու օրերը կատարվում էին) (Ղուկաս. Թ. 51) «Թող զմեռեալսն **թաղել զմեռեալս** իւրեանց» (Ղուկաս. Թ. 60) «Թող մեռելներն իրենց մեռելներին թաղեն»:³ Կարծում ենք՝ առաջին օրինակում **նորա**-ն ոչ թե հատկացուցիչ է, այլ կողմնակի ենթակա: Երկրորդ օրինակում **զմեռեալսն**- հոգնակի հայցականով ենթակա է և ոչ թե լրացում:

Գրաբարում անորոշ և անցյալ դերբայները կարող են հանդես գալ դիմավոր բայի գործառույթով, նման դեպքերում գերազանցապես անցյալ դերբայի հետ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 21:

հանդես են գալի սեռական, տրական, հայցական հոլովների ենթականեր¹:

Այս երևույթը, ինչպես տեսանք, այլ կերպ է արժևորում Յր. Աճառյանը: Սակայն նույն գրքի մի այլ գլխում՝ «Դերբայը հնդեվրոպականում», գրում է. «Պարսկերենում, նաև գերմաներեն և հատկապես շվեդերեն լեզվում, դերբայը գործ է ածվում հաճախ առանց օժանդակի և տալիս է դիմավոր բայի նշանակություն,... : Ռուսերենում անորոշ դերբայն էլ է իբրև դիմավոր գործածվում և այն՝ պարտավորականի նշանակությամբ. ինչպես՝ им пить... պետք է, որ նրանք խմեն, теперь мне идти – այժմ ես պետք է որ գնամ (բառացի՝ նոցա ըմպել, այժմ ինձ երթալ)²»:

Զենց իր բառացի թարգմանությամբ Յր. Աճառյանը տալիս է մեզ հուզող հարցի իրական պատասխանը, թարգմանությունը այլ բան է, գրաբարյան կոնտեքստը՝ այլ: Բերված օրինակներում, այո՛, անորոշ դերբայի հետ գործածված անդամները ոչ թե երկրորդական անդամներ են, այլ՝ ենթականեր:

Դերբայների՝ պարզ ստորոգյալի դերում հանդես գալու իրողությունները մենք դիտում ենք քերականական վերափնաստավորումներ³:

Յր. Աճառյանը դերբայների շարահյուսական և ձևաբանական գործառույթները անընդհատ շփոթում է միմյանց հետ: Այսպես՝ «Ամերևույթից կազմված է երկու ածական».

1. **-ի** մասնիկով, որ ածականակերտ սովորական մասնիկ է, ինչպես սիրելի, ուտելի, նշ., որ կարելի է սիրել, ուտել և այլն,

2. **-ոց** մասնիկը, որ ծառայում է իբրև ապառնի դերբայ, ինչպես **բերելոց**, «որ **պիտի բերել** կամ **պիտի բերվի**»⁴:

Ինչպես տեսնում ենք, Աճառյանը ապառնի դերբայի **-ի**-ով տարբերակը ածական է համարում, այն պարզ տրամաբանությամբ, որ ածականական գործառույթ ունի, այն անկախ դերբայ է. այսինքն՝ խոսքիմաստային պատկանելիությունը շփոթում է շարահյուսական գործառույթի հետ, իսկ **-ոց** վերջավորությամբ (իր գրքում՝ **-լոց**) տարբերակը համարում է դերբայ: **-L** մասնիկի ծագումը անորոշ, անցյալ և ապառնի դերբայների կազմում իրավացիորեն գտնում է, որ ծագել է հնդեվրոպական **Lo** մասնիկից, իսկ **g**-ն **Os-US** մասնիկից, որը հնդեվրոպական լեզուներում ապառնիության ցուցիչ է, այն հիմնավորվում է այն հանգամանքով, որ գրաբարի բոլոր ապառնիները՝ ստորադասական եղանակի առաջին և երկրորդ, և ապառնի դերբայը իրենց կազմում ունեն **-g- գրիցեմ, գրեցից, գրելոց** և այլն:

Գրաբարի անցյալ դերբայի կազմության և շարահյուսական գործառույթների

¹ Թ. Շահվերդյան, Գրաբարի դերբայներ. Ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, 2001 թ., էջ 17, 120:

² Յր. Աճառյան նույն տեղում էջ 17, 19:

³ Տես Թ. Շահվերդյան, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Երևան, 2007 թ., էջ 8-59

⁴ Յր. Աճառյան նույն տեղում, էջ 21:

մասին գրում է հետևյալը:

Նախ կազմության մասին. **եալ** մասնիկը կազմված է երկու բաղադրիչից **եա** + **լ** (Lo), որը, ըստ Աճառյանի, ավելացել է aorist-ի (հմա՝ բառացի «անորոշ» ժամանակ)¹, այնուհետև ավելացել է ցոյական հիմքին՝ **կոչեցեալ**, **ամաչեցեալ**, **ննջեցեալ** և այլն: Միաժամանակ նկատել է, որ նույն դերբայը կարող է կազմվել թե առաջին, թե երկրորդ հիմքերից՝ **խօսեալ-խօսեցեալ**, **հաճեալ-հաճեցեալ**: Ըստ Աճառյանի՝ քանի որ այս դերբայը ևս հոլովվում է (ո-հոլովում), դա նշանակում է, որ այն մախապես գոյական է եղել²:

Այստեղ մեզ թույլ ենք տալիս մի քանի վերապահումներ անել:

Նախ **ա** խոնարհման բոլոր պարզ և ածանցավոր բայերը, բոլոր տարահիմք բայերը (բացառությամբ **երթամ** բայի) կազմվում են անցյալ կատարյալի հիմքից. կան բացառություններ նաև մյուս խոնարհումներում:

Ու խոնարհման պարզ բայերի I և II հիմքերը չեն զանազանվում՝ **թողում-թողի-թողեալ**, **հեղում-հեղի-հեղեալ**: Սա մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք II հիմքից կազմված ձևեր են: Ինչ մնում է **ե** և **ի** խոնարհման բայերին, ապա դրանց անցյալ դերբայը սովորաբար կազմվում է ներկայի կամ I հիմքից:

Այս հարցին մենք անդրադարձել ենք «Գրաբարի դերբայները. ձևաբանություն և շարահյուսություն» գրքում. «Չր. Աճառյանը իր գրքում բերում է Սարիեսի հետևյալ կարծիքը /առանց մեկնաբանման/. «-**եմ**, -**իմ** լծորդության բայերի մի մասի դերբայը կազմվում է **-եցեալ** մասնիկով փոխանակ **-եալ**, ուր **-եա** մասը կրկնված է երկու անգամ /**սիրեցեալ սէր-եա-ց-եալ**/: Անշուշտ այն ժամանակ, երբ կազմվում էին այս ձևերը, այս **-եց** մասնիկի մեջ զգալի չէր is-a / 15,23/:

Այնուհետև Չ. Աճառյանը գրում է. «Ի՞նչ պատճառով դերբայի մեջ ներմուծվեց սահմանականի **ց** ձայնը. անշուշտ գլխավորապես տարբերություն դնելու համար ներգործական և կրավորական ձևերի միջև: **-եմ** և **-իմ** լծորդության բայերի հրամայականը լինում է ներգ. **սիրեա՛**, կրավ. **սիրեաց**, որոնց մեջ կրավորականի նշանն է **ց**, որից զուրկ է ներգործականը: Լեզուն վերցրեց հենց այս զանազանությունը և կազմեց նրա միջոցով **սիրեալ** իբր «սիրած» և **սիրեցեալ**, իբր «սիրված» / 15, 23 /:

Մեր կարծիքով՝ անցյալ դերբայը, իբրև կանոն, պետք է կազմվեր անցյալ կատարյալի հիմքից: Բայց անհրաժեշտ է բացատրել նաև, թե ինչպես եղավ, որ **-եմ**, և **-իմ** վերջավորվող բայերի անցյալ դերբայը կազմվեց ներկայի հիմքից: Նախքան այս հարցին պատասխանելը՝ ասենք, որ «ց» հնչյունը կրավորականի նշանն է, այսինքն **սիրեա՛** չի նշանակում սիրի՛ր, **սիրեա՛ց** սիրվի՛ր: Եթե ց-ն այդ-

¹ Լեզվաբանական բառարան, Երևան, 1975թ., էջ 24:

² Տե՛ս Չր. Աճառյան նույն տեղում, էջ 23:

պիսի նշանակություն ունենար, ապա բոլոր պատճառական բայերը ց-ով չէին կազմվի /օրինակ՝ **լցուցանեմ, կեցուցանեմ, կացուցանեմ**/:

Այնուհետև, քանի որ հազարավոր բայերի անցյալ դերբայը սեռը չի զանազանում, հետևաբար, այդ մի քանի դերբայի զանազանությունը չէր կարող լուծել գրաբարի բայական սեռի հարցը: Եթե մտովի պատկերացնենք, թե գրաբարը որքան բայական ձևեր ունի, որոնք սեռերը չեն զանազանում, ապա այդ մի քանի տասնյակ բայերի նման բացատրությունը միակողմանի կլինի:

Այժմ անդրադառնանք մեր առաջ քաշած հարցի պատասխանին և տեսնենք, թե ինչպե՞ս եղավ, որ **-եմ, -իմ** բայերի անցյալ դերբայը չպահեց իր ծագման հիմքը: Չէ՞ որ նույն **-եմ** և **-իմ** խոնարհման ածանցավոր բայերը պահեցին իրենց ծագման հիմքը /անցյալ կատարյալի/»: Օրինակ **արկանեմ-արկեալ, բեկանեմ-բեկեալ, լքանեմ-լքեալ**:

Անեմից առաջ դրան նպաստեց հենց **սէր-եա-ց-եալ** և դրա նման վանկերի լեզվաբանական ամփոփման օրենքը, երբ **եա+եա** կամ **ե+ե** վանկերից մեկը պետք է վերանար տարնմանության օրենքով: Կար մի հանգամանք էլ. **-ե** խոնարհման **ածեմ, բերեմ, հանեմ, հեղուսեմ, համբերեմ** պարզ բայերի անցյալի հիմքը ցոյական չէ: Համաբանության օրենքի համաձայն՝ նման մյուս բայերն էլ են թողնում իրենց **-եց** վանկը: Ոչ միայն **ե**, այլև **ու** խոնարհման բայերը ևս /օրինակ՝ **թողեալ, առեալ, հեղեալ, զեղեալ, արգելեալ**/ կարող էին նույն օրենքի համաձայն՝ **-եցեալ-ը** դարձնել **-եալ**¹:

Հ. Աճառյանի այն կարծիքը, թե **-եալ**-ով վերջավորվող բայերը (I հիմք) ներգործական են, իսկ **-եցեալ**-ովը կրավորական (II հիմք), V դարի մատենագիրների լեզվական փաստերով հիմնավորել ենք, որ անցյալի և ներկայի հիմքերից կազմված դերբայները ոչ սեռով և ոչ էլ նշանակությամբ միմյանցից չէին զանազանվում (**աճեալ-աճեցեալ, ամաչեալ- ամաչեցեալ, ննջեալ-ննջեցեալ**, սակայն V դարից հետո, հատկապես Նարեկացու մոտ **եցեալ**-ովը գործածվում է կրավորական սեռը զանազանելու համար):

Անցյալ դերբայը կազմված է եղել անցյալ կատարյալի հիմքից, հետագայում որոշ գործոնների ազդեցության տակ հիմքի **եց** մասնիկը ընկել է, որին նպաստել են նույնանման վանկերը **սիր- եաց- եալ (սիրեցյալ), ե** խոնարհման մի քանի բայերի անցյալի հիմք չուներնալը (**ածեմ, բերեմ, հանեմ... և այլն**)²:

Ենթակայականը գրաբարի և առհասարակ հայերենի միակ դերբայն է, որը միշտ հանդես է եկել անկախ գործածությամբ:

Աճառյանը գրում է, որ այս դերբայը գրաբարում սակավ կիրառություն ունի

¹ Թ. Շահվերդյան, Գրաբարի դերբայներ. Ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, 2001թ., էջ 113:

² Նույն տեղում, էջ 117:

«ընտիր» (իմա՝ դասական, Թ.Շ.) գրաբարում, եղածներն էլ ներգործական կամ չեզոք են, իսկ կրավորականի իմաստ արտահայտվում է ոչ թե ձևաբանորեն, այլ շարահյուսական մակարդակում՝ բարդ նախադասության կառույցում, և բերում է հետևյալ օրինակը՝ «Ձի ոչ է ծառ բարի, որ առնէ պտուղ չար», պետք է լիներ՝ «Ոչ գի է ծառ բարի արարող պտուղ չար», «Ձի էին բազումք, որ երթային և գային», պետք է լիներ՝ «Ձի եկողքն և գնացողքն բազումք»¹: Այնուհետև Աճառյանը գրում է, որ գրաբարում, իբրև «ընտիր հայերեն», հանդես է գալիս իչ մասնիկը իբրև ենթակայականի ցուցիչ հատկապես ներգործական սեռի բայերի վրա:

Աճառյանը գրում է նաև, որ ենթակայականի իմաստով հանդես են գալիս նաև լի մասնիկով ձևերը՝ **զենլի, զենլեաց**, ... «Լսելիք և առնելիք օրինաց» = «Օրենքը լսողներն ու կատարողները» և այլն:² Կարծում ենք՝ այստեղ ևս Աճառյանը տարբեր քերականական միավորներ շփոթում է միմյանց հետ. սրանց տարբերությունը ժամանակային նրբիմաստի մեջ է (ենթակայականը – ներկա, լի –ով ձևերը- ապառնի):

Մի քերականական իմաստ կրող միավորը, երբ հանդես է գալիս մի այլ քերականական իմաստով, մենք համարում ենք վերաիմաստավորում, տվյալ պարագայում՝ ձևաբանական վերաիմաստավորում:

Մ. Ասատրյանը արդի հայերենի դերբայները քննելիս հարցի պատմության մեջ գրում է, որ գրաբարում ենթակայականը դերբայ չէ, բերում է մի շարք ապացույցներ, այդ թվում նաև այն հանգամանքը, որ «Բայց ամբողջ հարցն այն է, որ գրաբարում **ող** ձևերը հայցական խնդրառություն ամենևին չունեն, ինչպես են նաև **իչ** ձևերը: Յենց միայն այս փաստը բավական է ապացուցված համարելու, որ այդ երկու ձևերն էլ գրաբարում բայական համակարգի մեջ չեն մտնում»³:

Գրաբարի բոլոր քերականները, ովքեր անդրադարձել են դերբայների խնդրառությանը, այս փաստն ընդունել են: Սակայն Յր. Աճառյանը իր ուսումնասիրության մեջ բոլորովին այլ նպատակով բերում է ենթակայական դերբայով օրինակներ, որոնցով հերքվում է այս տեսակետը: Այսպես՝ «Ասացինք, թե դերբայները բայական նշանակություն ունեն: Այդ երևում է հենց նրանից, որ ունեն ներկա, աորիստ և կատարյալ ժամանակ և ներգործական և հասարակ: **Նույնպես դերբայները ստանում են հաճախ այնպիսի խնդիրներ, որոնք հատուկ են բայերին և ոչ թե գոյականներին. ինչպես քեզ (զքեզ) սիրողը փոխանակ քո սիրողը, բայց գոյականով՝ քո սիրահարը. սանսկր. data vasv «տուող**

¹ Յ. Աճառյան, նույն տեղում, էջ 24-25:

² Նույն տեղում, էջ 25:

³ Մ. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Երևան, 1973 թ., էջ 393:

գինչս», բայց հյ. «տուող հարստութեանց»¹: Աճառյանի բերած օրինակներուն ենթակայական դերբայների հետ հանդես եկած լրացումները դերանուններով արտահայտված ուղիղ խնդիրներ են: Հենց միայն այս հանգամանքը վկայում է, որ ենթակայականը գրաբարում ունի խնդրառություն՝ բայի հիմնական հատկանիշներից մեկը, ուստի և դերբայ է:

Ամփոփելով Հրաչյա Աճառյանի ներդրումը հայրենի դերբայների ուսումնասիրման մեջ՝ հանգում ենք հետևյալին.

1. Անվանի գիտնականը, հետևելով իր նախորդներին, շարունակում է դերբայները տերմինավորել ժամանակի կարգով՝ ներկա, անցյալ, ապառնի, թեև վաղուց ի վեր աշխարհաբարի դերբայները ստացել էին նոր անվանումներ՝ անկատար, կատարելի, վաղակատար, հարակատար և այլն՝ տերմինավորման հիմքում դնելով կերպի քերականական կարգը: Հիմնավորում է նաև անորոշ դերբայի աներևույթ տերմինը:
2. Հր. Աճառյանը դերբայները քննելիս մինչև վերջ ձևաբանական և շարահյուսական մակարդակները շփոթում է միմյանց և ձևաբանական կարգերը քննում է շարահյուսական մակարդակում՝ խոսքի մասերը դիտելով նախադասության անդամներ:
3. Հր. Աճառյանի բերած լեզվական փաստերը վկայում են, որ գրաբարում ենթակայական դերբայը խնդրառու է, հայցականով լրացում է ստանում. դրանով մեկընդմիջտ հերքվում է այն կարծիքը, թե գրաբարում ենթակայականը դերբայ չէ:
4. Հր. Աճառյանի թողած գիտական ժառանգությունը անսպառ աղբյուր է լեզվաբանությանը զբաղվող արդի բոլոր բանասերների համար:

¹ Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 14:

ПРИЧАСТИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА ПО ГРАЧЬЯ АЧАРЯНУ

ШАХВЕРДЯН Т. С.

РЕЗЮМЕ

Обобщая вклад Грачья Ачаряна в изучение армянских причастий, приходим к следующим выводам:

1. Знаменитый ученый, следуя лингвистическим концепциям своих предшественников, продолжает дифференцировать причастия по временному показателю: причастия настоящего, прошедшего, будущего времени, хотя давно причастия современного армянского языка получили новые наименования — причастия несовершенного и совершенного вида, давнопрошедшее деепричастие, результативное причастие и т.д., в основе чего лежит грамматическая категория вида. Ученый обосновывает также термин “неопределенное причастие” для неопределенной формы глагола.
2. Анализируя причастия, Гр. Ачарян не разграничивает морфологический и синтаксический уровни, а морфологические категории изучает на синтаксическом уровне, рассматривая части речи как члены предложения.
3. Приводимые Гр. Ачаряном языковые факты свидетельствуют, что субъектное причастие древнеармянского языка управляет винительным падежом дополнения, тем самым опровергая то мнение, что субъектное причастие древнеармянского языка является причастием.
4. Научное наследие Гр. Ачаряна является неиссякаемым источником для лингвистических исследований современных и будущих филологов.

HRACHYA ACHARYAN ABOUT ARMENIAN PARTICIPLES

T. SHAHVERDYAN

SUMMARY

Having summarized Hrachya Acharyan's contribution to the study of Armenian participles we came to the conclusion that

1. The distinguished linguist like his former colleagues continued systemizing participles according to the time category — present, past and future, through New Armenian participles have acquired quite new denominations-imperfect, perfect, etc. On the basis which lies the aspect grammatical category. He gave reasons for the invisible term of infinitive.
2. While analyzing all the participles Hr. Acharyan confused the morphological categories at syntactical level as well as considered parts of speech as parts of sentence.
3. Linguistic facts presented by hr. Acharyan justifies that the present participle in Grabar is transitive, accusative takes a compliment thus forever rejecting the standpoint that accusative in Grabar is not a participle.
4. The scientific inheritance left by Hr. Acharyan is a rich source for those specialists who are dealt with linguistics.